08.05.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորական ուղերձը Երկրապահի օրվա առթիվ

Հարգարժան Երկրապահներ

Մայիսյան փառապանծ տոների շարքում իր արժանի տեղն ունի Երկրապահի օրը, որը երկիր պահող ու պահպանող, հայրենի հողի շունչը զգացող ու այդ հողից ուժ ստացած մարդկանց տոնն է:

Մեզ պարտադրված պատերազմի թելադրանքով, հայրենիքի կանչով դուք նետվեցիք կենաց ու մահու կռվի՝ դառնալով ուժի, արիության ու խիզախության օրինակներ, դառնալով երկարապահ ողջ կյանքի համար:

Հայրենիքի պաշտպանությունը վեր դասելով ամեն ինչից՝ երկրապահ դարձած տղաները ստանձնեցին հայրենիքի սահմանները, Արցախ աշխարհը պաշտպանելու սուրբ գործը: Նրանք դարձան ազատամարտիկ ու մահապարտ, երկրապահ ու զինվոր, հրամանատար ու նահատակ:

Սիրելի երկրապահներ

Դուք հայրենասիրության և հերոսության կենդանի օրինակ եք ու լավ գիտեք խաղաղության գինը, ինքներդ եք այն նվաճել ձեր զենքով ու հավատով, ձեր անձնուրաց պայքարով ու կյանքի գնով:

Ձեզանից յուրաքանչյուրը այս երկրին տվել է ամենաթանկը՝ մոտեցնելով հաղթանակի օրն ու խաղաղությունը:

Փառք նրանց, ովքեր ընկան մարտի դաշտում՝ փրկելով հող հայրենին և իրենց հայրենակիցների կյանքը:

Երկրապահ դարձած սևանցի տղաների սխրանքներն ու հերոսացումը շարունակվեցին անցյալ տարի՝ ապրիլյան քառօրյայի ժամանակ:

Ճակատագրական այդ պահին, գիտակցելով պատասխանատվության իրենց չափաբաժինն ու մարտի դաշտում իրենց դերը, առաջնագիծ մեկնեցին նաև սևանցի երկրապահները՝ հայրենիքն ու նրա պաշտպանությունը վեր դասելով ամեն ինչից՝ իրենց փորձով, իրենց իմացությամբ դառնալով ամուր հենարան, վստահելի զինակից :

Հարգելի երկրապահներ

Ցանկանում եմ, որ լինեք խաղաղ օրերի զինվորներ, արարեք և աշխատեք՝ վայելելով ձեր և ձեր նահատակված ընկերների կողմից նվաճված այնքան թանկ խաղաղությունը:
Միշտ մնացեք ձեր վեհ ու ազատատենչ գաղափարների կրողները՝ դառնալով օրինակ սերունդների համար:
Մաղթում եմ բոլորիդ առողջություն, բարեկեցություն, ապահով կյանք, ցանկանում եմ, որ միշտ լինեք գնահատված, շրջապատված ուշադրությամբ, քանի որ ձեր կյանքով ու պայքարով բազմիցս եք ապացուցել, որ երկիրն ուժեղ է և անպարտ ձեզ նման հայրենասեր և անձնուրաց տղաների շնորհիվ: